ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/246

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Փոթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15341-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.10.2020թ. թիվ 721 գրության հիման վրա, 09.10.2020թ.-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 09.10.2020թ.-ին:

09.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/246 համարի ծածկագիրը:

16.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 05.10.2020թ. թիվ 721 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր 05.03.2020թ.-ին: Պայմանագրի սահմաններում 21.08.2020թ-ին մատակարարվել է 4-րդ չափաբաժնից 300 հատ /ֆիստուլային ասեղ170/: Ապրանքը ստանալուց արձանագրվել է, որ ասեղի երկարությունը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով նախատեսված չափերին: Բանավոր կերպով տեղյակ ենք

պահել մատակարարին նշված անահամապատասխանության մասին, սակայն մատակարարն ասել է, որ օգտագործման ընթացքում խնդիր չի առաջացնի: Ուղարկված ապրանքից փորձնական օգտագործվել է, որն ի սկզբանե առաջացրել է հեմոդիալիզի սեանսի անցկացման խնդիրներ և սեանսը շարունակվել է այլ ֆիստուլային ասեղով՝ անխոչնդոտ:

Ելնելով վերոգրյալից, հայտը նախագծած ներկայացուցիչը տվել է բացասական եզրակացություն, որն ուղարկվել է մատակարարի էլ. փոստին: Այնուհետև գրությամբ դիմել ենք ապրանքը տեխնիկական բվնութագրին համապատասխանեցնելու համար, սակայն մինչև օրս մատակարարի կողմից ձեռնարկված ոչ մի միջոցառում չկա:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

02.10.2020թ.-ին ներկայացված գրությամբ Պատվիրատուն հավելել է նաև հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 05.03.2020թ. կնքված N ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ համաձայն՝ վերջինս պարտավոր էր «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել 4-րդ չափաբաժնից՝ 1000 հատ ֆիստուլային ասեղ 17G: Ապրանքը ստանալուց արձանագրվել է, որ ասեղի երկարությունը չի համապատասխանում տեխնիկական բնութագրով նախատեսված չափերին: Նշված խնդրի համար բազմիցս տեղեկացվել է Ձեզ, սակայն մատակարարված ապրանքը չի համապատասխանեցվել տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով վերը նշված փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը և 6.3 կետը՝ «Գյումրու բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն 02.10.2020թ.-ին միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը նշված չափաբաժնի մասով:»:

05.10.2020թ.-ին Պատվիրատուն լրացմամբ կից ներկայացրել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» պայմանագրի լուծման հիմքը, որը հրապարակված է gnumner.am կայքում 02.10.2020թ-ին:

27.10.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 09.10.2020թ.-ի թիվ ՍՅ-ԼՕ-2020/246 նախաձեռնված ընթացակարգի «Ադա Թրեյդ»ՍՊԸ-ի ներկայացրած դիրքորոշման, տեղեկացնում եմ Ձեզ, որ և հրավերով, և պայմանագրի նախագծով նախատեսված է եղել հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

- *ֆիստուլային ասեղ զարկերակային: Ասեղի տրամագիծը 1.7մմ-1.75մմ: Ասեղի երկարությունը ոչ ավել քան 20մմ: Խողովակի երկարությունը ոչ պակաս 150մմ-ից: Գործող Dialog+սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:*

«Ադա Թրեյդ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածով ևս ներկայացրել է պահանջվող տեխնիկական բնութագրով ապրանքը: Պայմանագրի տեխնիկական բնութագրի մասում իրենց կողմից եղել է անհիմն փոփոխությունը, որը չի ենթադրում ցակացած ապրանքի մատակարարում, քանի որ նախապես ներկայացրել է իր կողմից մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: /Կցվում է դիրքորոշմանը/: Կից ներկայացվում է նաև նշված ընթացակարգի հրավերը:

3. <u>«Ադա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ադա Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15341-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ադա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից կազմակերպված թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրերով գնման ընթացակարգին և կնքել է թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» պայմանագիր:

Մեր կողմից մատակարարվել է 300 հատ ֆիստուլային ասեղներ 17G համաձայն պայմանագրում ներառված թիվ 4 չափաբաժնին:

Պատվիրատուի այն մեջբերմանը, որ ասեղի երկարությունը չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, տեղեկացնում ենք Ձեզ, որ չնայած և

հրավերի տեխնիկական բնութագրում ի սկզբանե նշված է եղել ասեղի երկարություն, սակայն մեր միջև կնքված պայմանագրով ասեղի երկարությունը չի ներառվել պայմանագրի տեխնիկական բնութագրում կողմերի համաձայնությամբ:

Կից ներկայացնում ենք երկկողմ կնքված պայմանագրի պատճեն, որտեղ չկա նշված ասեղի երկարություն:

Այստեղ պատվիրատուի կողմից բարձրաձայնված խնդիրը եղել է ճնշումների տարբերությունը սարքի վրա, որի հետ կապված մեր կազմակերպությունը դիմել է արտադրող կազմակերպությանը, ներկայացրել է պատվիրատուի տրամադրված բողոքները խնդրելով տալ պարզաբանում նշված հարցին:

Կից Ձեզ ենք ներկայացնում արտադրող կազմակերպության պաշտոնական մեկնաբանությունները, կապված ճնշումների տարբերության հետ:

Ըստ արտադրողի բերված մեկնաբանության, ֆիստուլային ասեղները արտադրված են համաձայն միջազգային ընդունված նորմերի համապատասխան և փորձարկումները ցույց են տվել, որ 17G ասեղի համար կազմում է որ ավել քան 300մլ/րոպեում:»

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և բերված ապացույցները, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը մերժել և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/246 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի համաձայն՝ ընթացակարգի 4-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի՝ «Ֆիստուլային ասեղներ 17G երակային», մասով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Ֆիստուլային ասեղ զարկերակային: Ասեղի տրամագիծը 1.7մմ-1.75մմ: Ասեղի երկարությունը ոչ ավել քան 20մմ: Խողովակի երկարությունը ոչ պակաս 150մմ-ից: Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:»:

ii. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 05.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

iii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iv. Պայմանագրի հավելված 1-ով, ընթացակարգի 4-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի՝ «Ֆիստուլային ասեղներ 17G երակային», մասով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Ֆիստուլային ասեղներ 17G երակային»:

v. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Ա. Վարդանյանի կողմից 31.08.2020թ.-ին կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 6 համարի եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված Ֆիստուլային 17G երակային ասեղների երկարությունը 25մմ է, այն դեպքում, երբ Հրավերով սահմանվել է՝ ասեղի երկարությունը ոչ ավել քան 20մմ:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերում կատարված փոփոխություններ» բաժնում, 02.10.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 713 ծանուցման համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊ ընկերության միջև 05.03.2020թ.-ին կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի «ա» ենթակետի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15341-2020 գրությամբ «Աիդա

Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի

պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»

ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով ընթացակարգի 4-րդ չափաբաժնով սահմանված «Ֆիստուլային ասեղներ 17G երակային» գնման առարկայի մասով, բացի այլ տեխնիկական բնութագրերից, սահմանվել է, որ ասեղի երկարությունը պետք է լինի ոչ ավել քան 20մմ: «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 05.03.2020թ.-ին կնքված թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով ընթացակարգի 4-րդ չափաբաժնով սահմանված գնման առարկայի՝ «Ֆիստուլային ասեղներ 17G երակային», մասով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Ֆիստուլային ասեղներ 17G երակային»: Պայմանագրի հավելված 1-ը ստորագրվել և կնքվել է Պատվիրատուի և Մասնակցի կողմից:

Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Ա. Վարդանյանի կողմից 31.08.2020թ.-ին կազմված Եզրակացությամբ տրվել բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված Ֆիստուլային 17G երակային ասեղների երկարությունը 25 մմ է, այն դեպքում, երբ Հրավերով սահմանվել է՝ ասեղի երկարությունը ոչ ավել քան 20մմ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերում կատարված փոփոխություններ» բաժնում, 02.10.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 713 ծանուցման համաձայն՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա Թրեյդ» ՍՊ ընկերության միջև 05.03.2020թ.-ին կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագիրը «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի

կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7-րդ կետի «ա» ենթակետի ուժով (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է պայմանագրով կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ պայմանագրի միակողմանի լուծմանը:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Մասնակցի կողմից խախտվել է պայմանագրով ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների

կիրառմանը: Այլ կերպ ասած՝ թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով Ֆիստուլային 17G երակային ասեղների երկարությունը ոչ ավել քան 20մմ պահանջի բացակայության պայմաններում անհնար է արձանագրել Մասնակցի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման փաստը:

Ավելորդ է հիշատակել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կողմերի քաղաքացիական իրավունքները և պարտականությունները սահմանվել են վերջիններիս միջև կնքված թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագրով և դրա անբաժանելի մասը հանդիսացող հավելվածներով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործում առկա Պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցման ուսումնասիրության արդյունքում, պետք է արձանագրել, որ կողմերի միջև

կնքված թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն տեղեկագրում՝ www.procurement.am (www.gnumner.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակելու փոխարեն հրապարակել է նույն կայքի «Պայմանագրերում կատարված փոփոխություններ» բաժնում: Ըստ էության Պատվիրատուի կամքը, ուղղված լուծելու կողմերի միջև 05.03.2020թ.-ին կնքված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-2» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, պատշաճ չի իրականացվել:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15341-2020 գրությամբ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/246 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**